ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2019 թվականի փետրվարի 14-16-ը
Ռուսաստանի Դաշնություն քաղաք Մոսկվա գործուղման արդյունքների մասին

1. **Անուն, ազգանունը՝**
   Գագիկ Մկրտչյան
   Արմեն Եգանյան

2. **Զբաղեցրած պաշտոնները՝**
   ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի խորհրդական
   ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության արդյունաբերական քաղաքականության վարչության պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**
   Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն), 2019 թվականի փետրվարի 14-16-ը

4. **Հրավիրող կողմը՝**
   Եվրասիական Տնտեսական Միության Հանձնաժողով

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   «Եվրասիական տնտեսական միության տարածքում թանկարժեք քարերի և թանկարժեք մետաղների նկատմամբ գործողություններ իրականացնելու առանձնահատկությունների մասին» Համաձայնագրի նախագծի քննարկման նպատակով աշխատանքային խմբի խորհրդակցությանը մասնակցություն:

6. **Քննարկված թեմաները**
   Նիստի ընթացքում քննարկվել են ԵԱՏՄ անդամ պետություններում ներպետական համաձայնեցումների ընթացքում ձեռք բերված արդյունքները և ծագած խնդիրները:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**
   Հայկական կողմը կարևորեց Համաձայնագրի հնարավորինս արագ գործողության մեջ մտնելու հանգամանքը և համապատասխան ելույթում նշեց, որ նպատակահարմար կլինի Համաձայնագրի որոշ կետեր գործողության մեջ դնել ելնելով այդ կարևորությունից, ինչն արժանացավ անդամ պետությունների փորձագետների հավանությանը և ձևակերպվեց արձանագրության 18-րդ կետով:

8.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Քննարկումների արդյունքում հանվեցին Համաձայնագրի ներպետական համաձայնեցումների գործընթացում ծագած մի շարք դիտողություններ, իսկ մյուսների վերաբերյալ արվեցին առաջարկություններ՝ ընդհանուր մոտեցումներ ձևավորելու նպատակով: Պայմանավորվածություն ձեռք բերվեց մի քանի կետերի վերաբերյալ մինչև ս/թ փետրվարի 25-ը ներկայացնել դիրքորոշում՝ առաջիկայում (նախնական տվյալներով մարտի 15-ին) անդամ երկրների համապատասխան նախարարությունների փոխնախարարների մակարդակով կայանալիք հանդիպման վերաբերյալ: Նիստի աշխատանքների վերաբերյալ կազմվեց արձանագրություն:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Համաձայնագրի ընդունմամբ ԵԱՏՄ տարածքում կկարգավորվեն թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի շրջանառության հետ կապված խնդիրները: Մասնավորապես՝ Համաձայնագիրը նախատեսում է ԵԱՏՄ անդամ պետությունների կողմից հարգադրոշմների փոխադարձ ճանաչումը, ինչը զգալիորեն կնպաստի տեղական ոսկերչական արտադրանքը ԵԱՏՄ շուկաներ արտահանմանը:

Միջոցառման ակնկալվող արդյունքը Եվրասիական տարածքից երրորդ երկրներ արտահանման ծավալների էականորեն ավելացումն է, անդամ-պետությունների միջև գործարար կապերի և համագործակցության ամրապնդումը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

Գագիկ Մկրտչյան

Արմեն Եգանյան

19.02.2019թ.